



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,  
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
07 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 90**

**ՎԱՐԴԳԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև քաղ. Վարդգես Հովսեփյանի դիմումը՝  
**որոշում եմ**

1. Վարդգես Հովսեփյանին տալ իրեն պատկանող բնակավայրերի նշանակության տնամերձ հողմասում բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :
2. Հանձնարարել Վարդգես Հովսեփյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:
3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**



**Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,  
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

10 ՄԱՅԻՍԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 91

**ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Վերին Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի /բնակավայրի/ պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» թիվ 4-Ա որոշումը, հողամասի հատակագիծը, Առաջարկությունը ինչպես նաև Սարգիս Սեյրանյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Սարգիս Սեյրանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի Նորավան թաղամաս 2-րդ փողոց թիվ 16 հասցեում գտնվող 07-062-0007-0012 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.58312 հա հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,  
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
10 ՄԱՅԻՄԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 92**

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի պահանջը, ինչպես նաև Վերին Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 12-ի թիվ 19-Ա որոշման պահանջը, **որոշում եմ**

Փոփոխել քաղաքացի Միքայել Խաչատրյանի սեփականություն հանդիսացող / կադաստրային ծածկագիր 07-062-0032-0032/ 0.014 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության <<հասարակական կառուցապատման գործառնական նշանակության>>:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 19 թ. մայիսի 10  
գ. Վերին Պտղնի